

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՄԱՍԻՍ», ԹԻԻ 29

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱԶԳԻՍ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

ԶԱԽՆՇՏԻ ՎԵՐԱԾԵՑ՝ Փ. Ա.



PRINTED IN BULGARIA

1937

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ - ՄԱՍԻՍ.

ՍՈՖԻԱ.

891. 99

IX-95

06 AUG 2010

06 DEC 2011

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՄԱՍԻՍ», ԹԻԻ 29

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱԶԳԻՍ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

ԶԱԻՆՇՏԻ ՎԵՐԱԾԵՑ՝ Փ. Ս.



PRINTED IN BULGARIA

1937

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ».

ՍՈՖԻԱ.

25.02.2013

22486

891-99

Ա-95

06 AUG 2010

ԱԶԳԻՍ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

(ԶԱՒԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ)

Տեսարանը տեղի կ'ունենայ Պոլսոյ մէջ: Եւրոպա հիմնուած հայ ուրբանոցի մը սնօրէնր, Պոլսոյ նման առեւտրական կարեւոր քաղաքի մը վաճառականներուն պատշաճանութիւնն ալ խնդրած ըլլալով, ժողովի մը մէջ նախ իրմէն ինչ ինչ բացատրութիւններ կը պահանջուն առաջարկը նկատողութեան առնելու համար:

Տ Ե Ս Ի Լ Ա.

ՏՆՕՐԷՆԸ, ԱՏԵՆԱՊԵՏԸ ԵՒ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐ

(Ասեանը կը բացուի ի ներկայութեան ինը երեւելի վաճառականներու, ասեմապետութեամբ Պոնապոեան Էֆէնսիի):

ԱՏԵՆԱՊԵՏԸ. — (Տնօրէնին) Մ'իւտի'ւ, քու ատ ուրբանոցիդ համար չատ գէշ բաներ լսած ենք:

ՏՆՕՐԷՆԸ. — Կը խնդրեմ, ի՞նչ են լսածներնիդ, ըսողները ո՞վքեր են:



2941-2010

ԱՏԵՆ. — Ով ըսած է ըսած է, բաւական է որ ըսուած է:

ՏՆՕՐ. — Կարելի՞ է որ ամբաստանեալի մը չյայտնուի իրեն համար ըսուածները, թշնամական զրպարտութիւններ չե՞ն կրնար ըլլալ ասոնք:

Ա. ԺՈՂՈՎԱԿԱՆ. — Զրպարտութիւն մը ճշմարտութենէն զանազանելու չափ խելքերնիս կը հասնի:

ՏՆՕՐ. — Զեր իմացական կարողութիւնը կասկածի տակ ձգել չէ միտքս, բայց աշխարհի օրէնքն է ամբաստանեալէ մը բացատրութիւն ուղղել:

Բ. ԺՈՂՈՎ. — Ատենապետ էֆէնտի, ինչ որ մէջերնիս խօսեցանք, հարցուցէ՛ք, տեսնե՛նք ինչ պիտի պատասխանէ:

ԱՏԵՆ. — Շատ աղէկ, միւսի՛ւ, աս որբանոցդ ո՞ւր է, աշակերտներդ ո՞ր տեղումնքներէն են:

ՏՆՕՐ. — Լուկանօ է, տղաքը ամէնքը Կիլիկիայէն են:

ԱՏԵՆ. — Դէպք պատահած տեղումնքներէն են, ո՞րք են:

ՏՆՕՐ. — Բնականաբար:

Գ. ԺՈՂՈՎ. — Բան մը տեսե՞ր են, հարերնին, մարերնին մաքերնի՞ն է, ինչ եղաւը գիտե՞ն:

ՏՆՕՐ. — Ի՛նչ ըսել է. ամէն բան տեսեր են, ամէն բան մաքերնին է, տասը տասներկու տարեկան են, սիրտ պէտք է զխմանայ պատմածնին լսելով: «Մէյ մը մեծանք, ի՛նչ պիտի ընենք» կ'ըսեն:

Դ. ԺՈՂՈՎ. — Անուններնի՞ն ինչ է:

ՏՆՕՐ. — Լեւոն, Հեթում, Սմբատ, Արամ...

ԱՏԵՆ. — Զեռք կու տայ, ի՞նչ կը սորվին:

ՏՆՕՐ. — Քրիստոնէական, Հայոց պատմութիւն, հայերէն, գաղիերէն, տաճկերէն...

Ա. ԺՈՂՈՎ. — Երգ մե՞րգ:

ՏՆՕՐ. — Անտարակոյս, Եկեղեցական, աղգային բոլոր երգերը:

Բ. ԺՈՂՈՎ. — Ժմբաթիք ալ կ'ընեն:

ՏՆՕՐ. — Տարակոյս ունիք, սքանչելին կ'ընեն:

Գ. ԺՈՂՈՎ. — Արհեստ կը սորվին:

ՏՆՕՐ. — Այո՛, երկրագործութիւն, ատաղձագործութիւն, կօշկակարութիւն:

ԱՏԵՆ. — Այսչափը բաւական է: Մի՛ւսիւ, ա՛լ ի բերանէ քուսմէ դատեցար: Մեր գիտցածէն էւելը իմացանք:

ՏՆՕՐ. — (Շուարած) Ի՞նչ կայ, ի՞նչ ըսի որ:

ԱՏԵՆ. — Քիչ մը դուրս ելիր, ժողովս առանձին պէտք է խորհրդակցի:

(Տօրէնը դուրս կ'ելլի):

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ ԱՌԱՆՅ ՏՆՕՐԷՆԻ, ՅԵՏՈՅ ԱՐԹԻՆ

ԱՏԵՆ. — Յարգելի ժողովականներ, աս մարդը ելեր եկեր է հոս և կ'ուզէ օգնութիւն ստանալ իր բացած որբանոցին համար: Է՛հ, ի՞նչ կ'ըսէք, ա՛լ մտիկ ընենք զինքը, թէ ճամբու դնենք:

Ա. ԺՈՂՈՎ. — Աղբար, աս մարդոց կամ խելքը պակաս է և կամ ուրիշ գործ չունին, ինկեր են մէջտեղ որբանոց կը բանան, դպրոց կը հիմնեն: Իրենց ի՞նչ գործն է, առանց դրամ ունենալու այդ տեսակ մեծ գործերու մէջ կը մտնեն:

Բ. ԺՈՂՈՎ. — Ըսէ՛ տէ, ատէկա ըսէ՛, Սա մեր գործիչ ըսուածները կարծես գետնին վրայ չեն քալեր, այլ ամպերուն մէջէն կը թռչին: Կ'ելլեն կամ դպրոց, կամ որբանոց և կամ ղազէթա կը հիմնեն: Ո՛չ առաջը կը խորհին, ոչ ալ վերջը:

Գ. ԺՈՂՈՎ. — Սակայն այս պարոնը ո՞վ ղրկեց մեր վրայ: Մեր գլխուն փորձա՞նք ըլլալու համար բուսաւ հոս: Կարծես մենք հոս դրամ կը կտրենք, տո՛ւր անոր, տուր ասոր: Ասկէ զատ ի՞նչքան յարմար է ա-

սանկ ատեն մը ելլել Եւրոպա գտնուող որբանոցի մը ստակ տալ: Ատենապետ էֆէնտի, ճիշտ չէ՞ ըսածս:

ԱՏԵՆ.— Ծիշտ է, շատ ճիշտ է, ամա հիմա ելեր եկեր է, եթէ գէշ վարուինք և պարապ ետ դարձնենք անուննիս գէշ կ'ելլէ, ետեւէն մատնիչը կը փակցնեն: Է՛հ, աշխարհք է, ի՞նչ կ'ըլլայ ի՞նչ չ'ըլլար: Աւետարանին մէջ ըսուած է. «Եղիցին առաջինք յետին և յետինք առաջին»: Անոր համար կ'ըսեմ թէ այնպէս ընենք, որ կակուղ մը մէջէն ելլենք, մերժած չըլլանք, բայց ինքն ալ դո՛ւ չմնայ և ելլա՛մ երթալ:

Դ. ԺՈՂՈՎ.— Ես այդ մարդուն չհաւնեցայ, Ուրիշ քաղաք չկա՞յ աշխարհի մէջ, ու միայն Պոլիսը աչքին զարկաւ: Մանչէսթր, Լոնտրա, Նիւ Եորք և վերջապէս Փարիզ լո՛րտ պէս հարուստ հայեր կան, էֆէնտիմ, թող այնտեղերը գլուխ զարնէր:

Բ. ԺՈՂՈՎ.— Ըսէ՛ տէ, ատիկա ըսէ: Ծօ իշուկ, ըսես սա մեր որբանոցի տնօրէն ըսուածին, Պոլիսէն ի՞նչ խէր կը սպասես որ եկեր ես մեզի փորձանք դառնալու: Ծամբայ դնենք թող երթալ:

ԱՏԵՆ.— Չ'ըլլար, բարեկամներս, չըլլար, ամէն բանին մէկ ձեւը կայ: Գիշ մը օդնենք, բայց այնպէս մը ընենք, որ մեզ ալ վնաս մը չհասնի: Որբանոցի մասին մանրամասն տեղեկութիւն առնենք ու եթէ անանկ վնասակար բաներ մը կան, հեռացնենք զանոնք:

Դ. ԺՈՂՈՎ.— Ես, չիտակը ըսելով, շատ չեմ հաւնիր կոր այս պարոնին: Եթէ պատուաւոր մէկը ըլլար, Եւրոպայէն չիտակ հոս չէր գար. անպատճառ յեղափոխական ըլլալու է և որբանոցը պատրուակ բռնելով եկեր է հոս: Օր առաջ ձամբենք ղինքը:

ԱՏԵՆ.— Բարեկամս, ես ալ համաձայն եմ ձեզի հետ, բայց բացէն ալ վրնտիլ չ'ըլլար: Ծամբու բերե-

լն է աս մարդիկը, թէ իրենց համար աղէկ կ'ըլլայ և թէ մեզի համար:

Դ. ԺՈՂՈՎ.— Ատենապետ էֆէնտիին ես ալ համաձայն պիտի ըլլամ, բայց չեմ կրնար ներել թէ ինչո՞ւ չիտակ հոս չունչը առաւ:

Բ. ԺՈՂՈՎ.— Ըսէ՛ տէ, ատիկա ըսէ՛. լաւ որ որբանոցը ժընեւ բացած չէ:

Դ. ԺՈՂՈՎ.— Ո՞ւր է որ:

Բ. ԺՈՂՈՎ.— Անուն մը տուաւ մոռցայ, ամա ժընեւ չըլլալը աղէկ գիտեմ: Ատ ժընեւի մէջ է որ յեղափոխականները յեղափոխութեան արհեստը կը սորվին, պոմպա շինելու դաս կ'առնեն ու կ'ելլեն մէկին միւսին գլխուն փորձանք կը բերեն:

ԱՏԵՆ.— Ատ ի՞նչ բաներ կ'ըսէք, էֆէնտի, ամա խնդրեմ, ատանկ բառեր մի գործածէք, ապա թէ որ կե՛լլեմ կ'երթամ այստեղէն. պատը ականջ ունի: Եթէ լսուի թէ մեր ժողովին մէջ այդպէս վնասակար բառեր բերան կ'առնուին, ի՞նչպէս մեզի պիտի արդարացնենք:

Դ. ԺՈՂՈՎ.— Ատենապետ էֆէնտին իրաւունք ունի, զգուշութիւնը ամէն բանէ առաջ է, կրնամ ըսել որ ժամանակին պահանջն է:

Բ. ԺՈՂՈՎ.— Ներողութիւն կը խնդրեմ, սիրտիս նեղութենէն այդպէս խօսեցայ: Աստուած այդպէս մարդոց մեզ չհանդիպեցնէ. փորձանք են, փորձանք:

Ա. ԺՈՂՈՎ.— Մէյ մը կանչենք ղինքը ու հասկնանք ամէն բան, տեսնենք ի՞նչ տեսակ որբանոց է պահածը, եթէ մեր ինսպեկտի որբանոցին պէս բան մըն է, քանի մը ոսկի կու տանք ձեռքը և կը ճամբենք:

ԱՏԵՆ.— Ես ալ ատիկա պիտի ըսէի, ամէն բան իր բերնէն լսենք: (Ձանգը կու տալ, սպասուորը կը մտնի): Արթի՛ն, վարժապետը դուրսն է:

ԱՐԹԻՆ.— Ո՞ր վարժապետը:

ԱՏԵՆ.— Բաւական դժուար հասկցող ես հա՛, ան որ քիչ մը առաջ հոս էր:

ԱՐԹԻՆ.— Ան որ դուրսէ՞ն եկեր է:

ԱՏԵՆ.— Ո՞վ ըսաւ թէ դուրսէն եկած է:

ԱՐԹԻՆ.— Մարդ չըսաւ:

ԱՏԵՆ.— Հապա ո՞ւրկէ իմացար:

ԱՐԹԻՆ.— Մենք ալ մարդ ենք, էֆէնտի, քիչ մը խելքերնիս բան մը կը կտրէ: Քալուածքէն, սիկար քաշելու ձեւէն յայտնի է քի ո՛չ Ստամպուլի և ո՛չ ալ Անատոլուի ապրանք է:

ԱՏԵՆ.— Լաւ, լաւ, նայէ որ այդ ենթադրութիւններդ քեզի պահես, ասդին անդին չխօսիս, թէ եւ բան մը չկայ, բայց խոհեմ ըլլալու է:

ԱՐԹԻՆ.— Էֆէնտի կասկած թող չունենայ, մենք ալ մարդ ենք, խաֆիէ ըսուածը քիթին ձեւէն, ֆէսին դրուածքէն կը հասկնամ:

Ա. ԺՈՂՈՎ.— Փառք Աստուծոյ, վնասակար բան մը չունինք որ վախնանք:

Բ. ԺՈՂՈՎ.— Ըսէ տէ, ատիկա ըսէ, հայտէ, քուզուժ Արթին աղա, սա վարժապետը կանչէ թող գայ:

(Արթին ասեցապիտիկ կը նայի)

ԱՏԵՆ.— Ժամանակը կ'անցնի գործերնիս շատ է: Ըսէր տուր թող գայ: (Արթին կ'ելլէ)

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՏՆՕՐԷՆԸ

ԱՏԵՆ.— Ինչո՞ւ ատ որբանոցը Եւրոպա բացեր ես:

ՏՆՕՐ.— Ազատ երկրի մէջ չեմ նեղուիր կրթութիւն տալու համար:

Ա. ԺՈՂՈՎ.— Պարապ խօսք: Օսմանեան կայս-

րութեան մէջ դպրոց, որբանոց պակաս չէ, ամէն օր ալ կը բացուին: Որբանոցդ պէտք է օսմանեան հող փոխադրես, որպէսզի տղոցը շնորհքով ազգօգուտ դաստիարակութիւն մը տաս:

ՏՆՕՐ.— Ի՞նչ կ'ըսէք, կարելի՞ բան է:

Բ. ԺՈՂՈՎ.— Դու զիտնալու բանդ է: Տղաքը ո՞ր կողմերէն են:

ՏՆՕՐ.— Կիլիկիոյ զանազան քաղաքներէն. Այթապ, Մարաշ, Ատանա, Զէյ...

ԱՏԵՆ.— (Բարկութեամբ ընդմիջելով) Զեռք կու տայ, ձեռք կու տայ: Ատ քաղաքներէն չըլլար: Ազգին բոլոր աղէտները ատ քաղաքներուն երեսէն են, բարով խերով չըլլային: Ուրիշ քաղաք չկա՞յ մի:

ՏՆՕՐ.— Ինչո՞ւ չէ, վանէն, Մուշէն, Էրզրու-մէն...

Գ. ԺՈՂՈՎ.— Մեզի ծաղրելու ելեր ես: Ատոնք գէշին գէշն են: Ազգին բոլոր աղէտները ատ քաղաքներուն երեսէն են, բարով խերով չըլլային: Ուրիշ քաղաք կը պահսի:

ՏՆՕՐ.— Շատ աղէկ, ուրիշ տեղերէ ալ որբեր կան, Մարզուան, Ակն, Արաբկիր...

Ա. ԺՈՂՈՎ.— (Բարկութեամբ) Մենք քեզի չընորհքով քաղաք կ'ըսենք, դուն ելեր ի՞նչ կ'ըսես: Անոնց բոյնը էն առաջ ատ տեղուանքը դրուեցաւ, մենք ալ բան մը զիտենք: Ազգին բոլոր աղէտները ատ քաղաքներուն երեսէն են. բարով խերով չըլլային:

ՏՆՕՐ.— Կիլիկիայէն չ'ոնե՛մ, Հայաստանէն չ'ոնե՛մ, Փոքր-Հայքէն չ'ոնե՛մ, անդին ի՞նչ կը մնայ:

ԱՏԵՆ.— Հայուն խըթըլիսի՞ն եկեր ես, որ պիտի երթաս տէրութեան ջիղերուն դպած տեղերէն առնես: Մինչեւ Զին ու Մաչուհ հայ կայ, ա՛ռ ու առ: Ասա

է, կարճ կապենք. ի՞նչ տեսակ որբեր են նայինք:

ՏՆՕՐ.— Որբին տեսակը կա՞յ, ամէնուն ալ հա-
րը, մարը ջար...

ԺՈՂՈՎ.— (Բոլորը միասին) Սըս, սըս, սը...

ԱՏԵՆ.— Մի'ւսիւ, մտածելով խօսէ: Ամէն բան
իր պատշաճ լեզուն ունի. ատանկ բաներուն կ'ըսեն՝
դէպքին հանդիպած են:

ՏՆՕՐ.— Ատ ալ աղէկ, ամէնուն ալ հարը մարը
դէպքին հանդիպած են, աղաքն ալ որբ մնացած են:

Բ. ԺՈՂՈՎ.— Շէնքով շնորհքով որբեր չկա՞ն,
որ կ'երթաք ատանկները կը փնտռէք:

ՏՆՕՐ.— (Զարմացած) Շէնքով շնորհքով որբը
ո՞րն է:

ԱՏԵՆ.— Մարդը կը հիւանդանայ, խոստովա-
նանքը կ'ըլլայ, հաղորդութիւնը կ'առնէ, խելքը գը-
լուխը անկողինին մէջ հոգին կ'աւանդէ, եկեղեցական
արարողութիւններով կը տանին կը թաղեն, ասանկ
կանոնաւոր մեռնողին ո՞վ բան կ'ըսէ: Ասոնց ձգած
աղաքն ալ չէնքով շնորհքով որբ են, մեղքցուելու
ալ արժանաւոր: Ասանկ որբեր առնելու ես: Մէյ մըն
ալ, ի՞նչ ըսել է ատ տարիքը աղաք առնել, որ մըս-
քերնին բաներ դրած ըլլան:

ՏՆՕՐ.— Ծիծի աղաքը առնեմ:

ԱՏԵՆ.— Ատ քու գիտնալու բանդ է: Ատ տա-
րիքը աղաքներ կ'առնէք, որ մտքերնին բաներ մը
դրած ըլլան, անոնց գլուխը շուտով կը լեցուի, եր-
թան բան մըն ալ իրենք հանեն, վրէժ լուծենք ըսե-
լով, ինչպէս բերնովդ խոստովանեցար: Անոնք ալ պա-
տիժին շուտ կը գտնեն, բայց ի՞նչ օգուտ, անոնց
աղաքն ալ նորէն ասանկ մեր վրայ կը մնան: Ու
մենք դատինք աշխատինք, մեր զաւակներն ալ դա-
տին աշխատին, որ ասանկները պահենք մեծցնենք:

Ամա՛ն Աստուած, ամա՛ն Աստուած, աս ի՞նչ է մեր
քաշածը:

ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԸ.— (Կես մը ոտի ելած օծի-
նի կը քօրուեն ու միաբերան) Ամա՛ն Աստուած, ա-
մա՛ն Աստուած, աս ի՞նչ է մեր քաշածը:

ԱՏԵՆ.— Ահա կը տեսնե՞ս, ժողովս ամբողջա-
պէս կը բողբէ, ա՛լ դուն մտմտա թէ ի՞նչ ընելու
ես, ընտոր աղաք առնելու ես որ մեր վստահութիւնը
գրաւես: Գանք սա անուններուն: Ասկէ ետքը ա՛լ ա-
տանկ անուններ պիտի չըլլան: Ազգին բոլոր աղէտնե-
րը ա՛տ անուններուն երեսէն են. բարով խէրով չըլ-
լային: Առաջ ինչ երջանիկ էինք, երբ չէնքով շնորհ-
քով հայու անուններ կային: Որբերուն ատ մեր հին
անունները դնելու է:

ՏՆՕՐ.— Ատ դիւրին է, հին անուններ կը դը-
նենք՝ Սարգիս, Գէորգ, Մկրտիչ, Գրիգոր, Թադէոս,
Բարթողիմէոս...

Բ. ԺՈՂՈՎ.— Կեցի՛ր, մի'ւսիւ, կեցի՛ր, ո՞ւր
կը վազես, ատ անուններն ալ չեն ըլլար:

ՏՆՕՐ.— Բայց մեր հին հօրենական, պապենա-
կան անունները ասոնք չե՞ն:

Ա. ԺՈՂՈՎ.— Ամէն բան իր ատենին: Հիմա
ատ անունները չատ ջուր կը վերցնեն...

ԱՏԵՆ.— Հապա հապա, մէյ մը սա Սարգիսը,
Գէորգը երեք չենք ընդունիր: Ան ի՞նչ է ժամերը
պատկերներուն վրան կան, ձեռքերնին սուր, ներ-
քենին ձի, ոտքերնուն տակ զագան մը: Տէրութեան
կասկած տալու չէ, աղոց միտքն ալ բան ձգելու չէ:
Մկրտիչը՝ արմատէն ջնջելու է. հիմա գացեր էջմիա-
ծին հանգիստը կը նայի, ազգին բոլոր աղէտները
ատ մարդուն երեսէն են. բարով խերով չըլլար...

Բ. ԺՈՂՈՎ.— Ըսէ տէ՛, ատ ըսէ...

ԱՏԵՆ.— Ան Գրիգոր է, Թադէոս է, Բարթողի-

մէոս է, անոնք մտքէ անցընելն ալ մեղք է: Մենք ալ քիչ մը ի գրոց ենք: Գրիգոր, Թադէոս, Բարթողիմէոս ըսի՞ր մի, լէպ տէմէտէն լէպլէպի աղնար, «Հայաստանայց» ալ ինքնիրենը ետեւէն կուգայ: Հայաստան Մայաստան չի կա՛յ, ատ բաները ա՛լ լինցան: Ազգին բոլոր աղէտները ատ Հայաստան անունին երեսէն են: (Հեգնութեան շեշտով մը) Անուններուդ փունջին մէջ մեծ կարմիր վարդը կը պակսի: Ներսէսնիդ ո՞ւր է, Ներսէսնի՛դ, ան ինչո՞ւ չես դըրեր... ինչ է նէ, նորէն կարգաւոր է, լեզուս բռնեմ: Ազգին բոլոր աղէտները ատ մարդուն երեսէն են. բարով խերով չըլլար:

ՏՆՕՐ.— (Ժպիտով մը) Հասկցայ, հասկցայ, աւետարանիչներու, առաքեալներու անուններէն դուրս չեմ ելլեր:

Դ. ԺՈՂՈՎ.— Հա՛, սանկ կարգի եկուր, ի՞նչ անուններ պիտի դնես նայինք:

ՏՆՕՐ.— Աւետարանիչներէն կը սկսինք, Մատթէ...

ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԸ.— (Ամենք մեկ զսպանակի մը մղուածի պէս վեր կը ցատկեն գունաքափ, պոռալով) Պապանձէ, պապանձէ, լեզուդ բռնուի:

ԱՏԵՆ.— Մի՛ւսիւ, մի՛ւսիւ, խելքդ գլուխդ կանչէ, բերնէդ ելածը ականջդ թող լսէ: Միտքդ ուր կ'երթայ նէ մենք կը հասկնանք: Ազգին բոլոր աղէտները ատ մարդուն երեսէն են. բարով խերով չըլլար:

ՏՆՕՐ.— Բայց ի՞նչ անուն կ'ուզէք, դուք ըսէք, ալ բան չմնաց:

ԱՏԵՆ.— Ատ քու գիտնալու բանդ է: Անանկ երկու միտքով անուններ չըլլար, ժողովիս որոշումը աս է:

Բ. ԺՈՂՈՎ.— Ըսէ աէ, ատ ըսէ...

ԱՏԵՆ.— Գանք սովրեցուցածներուդ, Նայէ՛, քրիստոնէականին խօսք չունինք: Աղէկ հոգ տար: Ա՛ն խոնարհութեան, համբերութեան, հեղութեան, հնազանդութեան պատուիրանքները, իշխանութեան Աստուծմէ ըլլալուն ճշմարտութիւնը, թագաւորին հաւաատարիմ չեղողները դժոխք կ'երթանք, ծառայք հնազանդ լերուք տէրանց ձերոցը, հապա ան մէկ երեսիդ զարնողին միւսը դարձուր պատուակա՛ն խրատը, մարգրիտներ են, մարգրիտներ: Ասոնք աղոցը մտքերուն մէջը խոթէ, որ իրենք ալ փորձանքի չը հանդիպին, ազդն ալ, ու օր մը մեզի օրհնեն:

Ա. ԺՈՂՈՎ.— Հապա, հապա, ատանկ ըսէ...

ԱՏԵՆ.— (Շարունակելով) Բայց հայոց պատմութիւնը ըսուածին անունը պիտի չլսուի, արմատէն, արմատէն (ձեռքովը մանգաղի պէս կը հեծէ): Հայկ, Արամ, Տիգրան, Լեւոն չ'ըլլար: Ազգին բոլոր աղէտները ատ հայոց պատմութեան երեսէն են. բարով խէրով չըլլար: Օսմաներէնը ինչո՞ւ էն ետքը ըսիր: Ի՛նչ առաջ, եւ անանկ թիւրքերէն, տաճկերէն նախատական բառերը պիտի վերցուին. օսմաներէն պիտի ըսուի: Գանք էն կարեւորին. ազգային երգը ի՞նչ է, նայինք: Բամբ Որոտա՞ն, Արիք Հայկազո՞ւնք. ատոնց մէկ զիրը անգամ պիտի չլսուի: Ազգին բոլոր աղէտները ատ երգերուն երեսէն են. բարով խէրով չըլլային:

ՏՆՕՐ.— Շատ աղէկ, մինակ եկեղեցական երգեր սորվեցնենք:

Ա. ԺՈՂՈՎ.— Բայց անոնց մէջ ալ անանկ չըրաչափառ է, վարդանանց է, Ղեւոնդեանց է, թագաւորաց քրիստոնէից և զինուորեալ մանկանց նոցա է, ըլլալու չեն: Զինուորեալ մանկանց եղեր, սըւոր նայէ, ան լակոտներն ալ ժամը ատանկ բաներ լսելով կը հաւատան, որ մանուկը զէնք կրնայ առնել, քը-

ընտանեայ թագաւորին հետ միանալ: Ժըմլասթիքը ի՞նչ է նայինք:

ՏՆՕՐ.— Առողջութեան համար է, տղաքը ոյժ կ'առնեն, կը զօրանան:

Գ. ԺՈՂՈՎ.— Պէտք չէ, մենք առողջ ենք քնէ սըմլասթիքը ըրած ենք: Ասանկ բաները կոռւի պատճառաւ թիւններ են: Սորվեցուցած արհեստներդ ի՞նչ են:

ՏՆՕՐ.— Արդէն ըսի, ի հարկին ապրուստ ձաբելու գործ մը: Երկաթագործութիւն, ատաղձագործութիւն, կօշկակարութիւն:

Բ. ԺՈՂՈՎ.— Արհեստը աղէկ բան է, ոսկի պիւլէզիկ է կ'ըսեն, նայէ՛, ատիկա շատ խելացի մտմտացիք ես, բայց չնորհքով արհեստ սորվեցնելու ես, որ կառավարութիւնն ալ չկասկածի: Ատ քու սորվըցուցածներդ օր մը շատ գէշութիւններ առաջ կը բերեն:

ՏՆՕՐ.— Ի՞նչ տեսակ արհեստ կ'ուզէք, դուք ըսէք:

ԱՏԵՆ.— Ատ քու գիտնալու բանդ է, ժողովիս միտքը հասկցար: Անանկ արհեստներ սորվեցնելու ես, որ մէջը դանակ մանակ, սուր մուր, ասեղ, թփուր, պիղ միզ չմտնեն: Ատանկ արհեստներ չա՛տ: Աս լմընցաւ. սա դաս առողջները ո՞վ են նայինք:

ՏՆՕՐ.— Դպրոցէ ելած, ուսեալ, շնորհքով մարդիկ են:

Բ. ԺՈՂՈՎ.— Անշուշտ դպրոցէ ելած են, հարցուցածնիս ատ չէ, անոնցմէ՞ են:

ՏՆՕՐ.— Ո՞րոնցմէ:

Գ. ԺՈՂՈՎ.— Ձէ՞ք հասկնար կոր, հը, ի նոցանէ՞ են: Արդէն մէկիկ մէկիկ պիտի քնենք ես: Ազգին բոլոր աղէտները անոնց երեսէն են: Բարով խերով չըլլային:

ԱՏԵՆ.— Հիմա, մի'ւսիւ, ժողովիս հոգին ըմբռնեցիր, որոշումները հասկցար, քնա՛ ատոնց վրայ աղէկ մը մտմտա, քեզի ժամանակ, եթէ մեր բոլոր պայմանները յանձն կ'առնես, մենք ալ որբանոցիդ համար ընկելքնիս գիտենք, ատիկա մեզի ձգէ:

ՏՆՕՐ.— Բայց նախ կը փափաքէի գիտնալ թէ ձեր աջակցութիւնը մինչև ո՞ր աստիճան պիտի ըլլայ, որպէսզի ես ալ անոր համեմատ ընկելքս որոշեմ:

ԱՏԵՆ.— Է՛հ, ժամանակները յայտնի են, մենք ալ աս գործերուն երեսէն շատ վնաս ունեցանք, անոր համար սրտերնիս էրած կը խօսինք: Մինակ մենք, հոս եղողներս պիտի տանք, եթէ մեր բոլոր որոշումները ընդունիս, մենք ալ մէջերնիս հանգանակութիւն ընելով քեզի ամիսը օսմանեան ոսկի մը կու տանք:

Ա. ԺՈՂՈՎ.— Ատենապետ էֆէնտի. ամէնքը չըլմեցաւ, ուրիշ պայման մըն ալ կայ. սա ուր է գիտես...

ԱՏԵՆ.— Աղէկ միտքս ձգեցիր, մենծ էշը ախողը մոռցանք, մի'ւսիւ...

ՏՆՕՐ.— (Ոսփի ելլելով աչքերը չորս դիմ ժուռ կ'ածե, աղէկ մը կը նայի եւ յետոյ ասեճապետին դառնալով) Ի՞նչ, դեռ դո՞ւրսն ալ մնացող կայ եղեր: (Կը ձգէ կը մեկնի):

(Քանի մը բոպէ շուարում)

Ա. ԺՈՂՈՎ.— Սրիկա՛ն, մեզի ամէնքս էշ ըրաւ, չլսեցի՞ք:

(Ժողովականները շուարած, ամեմբը ոսփի վրայ կը խօսին իրարու հետ):

ԱՏԵՆ.— Տեսա՞ր ապերախտ շուներ, մենք իրեն ա՛յնքան աղէկութիւն ընենք, ինք մեզի էշ ընէ:

Ա. ԺՈՂՈՎ.— Հապա իր հասցուցած լակոտնե՞րը ինչ պիտի ըլլան:

Բ. ԺՈՂՈՎ. — Հիմա եկուր տէ աս աղգին բա-
րիք քրէ:

Գ. ԺՈՂՈՎ. — Աս ի՞նչ է, էֆէնախմ, քաշած-
նիս, աս ի՞նչ է, աշխարհքիս հոգը մեզի՞ են տուեր
ի՞նչ է:

Դ. ԺՈՂՈՎ. — Բարերար եղար որ էշ ըլլաս:

ԱՏՆՆ. — Հայտէ երթանք մէյմէկ պիրա խմենք,
քիչ մը պաղլկինք: Էօ՛ֆ, աս աղգին ձեռքէն քաշած-
ներնիս:

(Օձիւք բորուելով կը մեկնին)

ՎԱՐԱԳՈՅՐ



«Ազգային գրադարան»



NL0224659

“ՄԱՍԻՍ, ԳՐԱՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Լ. Էվ
1. Ասուր-Նազիր-Աբալ	Կ. Մեհեմետ	10
2. Մեծապատիւ Մուրադկանները	Յ. ՊԱՐՈՆԵԱՆ	30
3. “Մասիս”, Տարեգիրք Ա. Տարի	Ա. ՍԵՒԱՆ	100
4. Թանկագին Համբոյր (Կակերդ. 1 արար)		10
5. Գիրուկ Մարդուն Հանոյքները	ՈՒ. ՃՕՆՍԸՆ	15
6. Հռոմի Պապին Զաւակները,	Մ. ԶԷՎԱՔՕ	150
7. Գուշակը (Երգիծավեպ)	ՍԹ. ԳՈՍԹՈՎ	20
8. “Մասիս”, Տարեգիրք Բ. Տարի	Ա. ՍԵՒԱՆ	100
9. Հրաշքներու Պալատը	Մ. ԶԷՎԱՔՕ	150
10. Խելագար Հայունին	ՏՈՔԹ. ՃԷԼԱԼԵԱՆ	65
11. Մուսա Լեւան 40 Օրերը Ա. Բ. Հասոր ՖՐ. ՎԵՐՖԷԼ		400
12. Ռակասքենի Ասպէսը	Մ. ԶԷՎԱՔՕ	150
13. Հին Հայ Բանաստեղծուքիւնը	Գ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ	30
14. Հայ Եղեռներ	Մ. ՆԵՏԻՄ	20
15. Թարգան	ԷՏԿԱՐ ՌԱՅՍ ՊՈՐՈՒ	50
16. Յոյն Լրտես. Գործունեութիւնը	ՊՈԼՏՈՅ ՍԷՂ	20
17. Վիսօֆ	ԱՐԹՒՐԻՐ ՊԷՐՆԷՏ	100
18. Վարդան Մամիկոնեան	ՕՆ. ՄԽԻԹԱՐԵԱՆ	20
19. Սիրոյ վը վեպը	ՕՆ. ՄԽԻԹԱՐԵԱՆ	10
20. Նահանջ	ՕՆ. ՄԽԻԹԱՐԵԱՆ	10
21. Արամ Մանարեան	ՕՆ. ՄԽԻԹԱՐԵԱՆ	12
22. Կարմիր Յորձանք	ՕՆ. ՄԽԻԹԱՐԵԱՆ	50
23. Պաղտատար Աղբար (Կակերդ. 3 արար)	Յ. ՊԱՐՈՆԵԱՆ	35
24. Ազգային Բարերար	Ե. ՕՏԵԱՆ	15
25. Պէլիքեկոր	ԱՐԹՒՐԻՐ ՊԷՐՆԷՏ	80
26. Ընկեր Շահագար (Երգիծ. վեպ)	Ն. ՊԷՇԵՎԿՈՇԼԵԱՆ	10
27. Արիւնի Ճանապարհին	Կ. ԽՐԱՅԵԱՆ	40
28. Արիւնաբոյ Կինը (Ա. Բ. Հասոր)	ԱՐԹՒՐԻՐ ՊԷՐՆԷՏ	80
29. Ազգիս Բարերարները (Զաւեշ 1 արար)	Ա. ԵՐՓԻԱՐԵԱՆ	15